

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻԻ Բ

ՄԱՅԻՍ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
1. Բարոզ Մաղիազարդի .	33
2. Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ . — Առաքելութիւն Սրբոյն Թադեոսի .	41
3. Շնորհակալութիւն .	51
4. Կրօնական Դաստիարակութիւն .	52
5. Մահացու Մեղք . — Նախանձ .	54
6. Խրատականք Մարկոսի Աւրելիոսի .	59

Հանդիսիս բաժանորդագիրն է ամենուրեք
սարեկան 4 Շիլինգ կամ 5 Փրանք, վեցամսեայ
2 Շիլինգ կամ 2½ Փրանք թղթասարաւ :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէ՛տ է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի . —

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Բ Թ

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե Լ Ա Ս Տ ՈՒ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Ի Ր Տ Ջ Ի

Մ ր ք ա զ ն ա գ ո յ ն Կ ա ր ր ո լ ի կ ո ս ի Ա մ ե ն ա յ ն Հ ա յ ո յ

Թ Ի Ի 2

Ն Ո Ր Շ Ր Ձ Ա Ն

Մ Ա Յ Ի Ս 1900

Ի Գ Ա Լ ՈՒ Ս Տ Ն Բ Ր Ի Ս Տ Ո Ս Ի Յ Ե Ր ՈՒ Ս Ա Ղ Է Մ

(Խօսեցեալ յսագալիս եկեղեցւոջ Հայոց Մանչեսթրի յարուր
Մաղխազարդ Կիւրակիի .)

« Ուսաննա Բարձրելոյն . օրհնեալ որ գատր յանուն Տեառն » :

Միրելի ժողովուրդ .

Մեր Փրկչի քառասնօրեայ փորձութեան յիշատակն քառասնորդական պահոց խորհրդով կատարեցինք . եւ կը յուսամ թէ ամենքս եւս վայելուչ կերպիւ պահեցինք այդ յիշատակ . գէթ եկեղեցւոյ մէջ ամեն կիրակի աշխատեցանք այն տէրունի շաւղովն ընթանալ որով մեր Փրկիչ քառասուն օր մեզաց եւ սատանայի թելադրութեանց դէմ գնելով ընթացաւ , մեր խորհրդածութիւններ կեդրոնացընելով եօթն մահացու մեզաց վերայ , որոց վերջին երկուսն յետ Չատկի յարմար առթիւ պիտի 'ի նկատի առնումք : Այժմ այլ եւս ժամանակ չունիմք . շտապինք տեսնենք այս ի՛նչ ձայներ են որ հեռուէն կը լսուին . այս կողմէն գէպ 'ի Բեթանիոյ եւ Բեթբազէի մօտերն երթանք . այս ի՛նչ աղմուկ , այս ի՛նչ բազմութիւն . Յորդանանու կողմէն է կարծեմ . Երիբովէն կը գան : Կը տեսնէ՞ք այն նիհար տփոցն մարգն , պատառատուն փոշոտ զգեստով , որ ամենէն յառաջ կը վազէ , ամենու եւս կը նայի , ամենու

հետ կըխօսի կըխնդայ, կարծես թէ իւր աչաց զօրութիւնը կ'ուզէ փորձել: Հասկացանք. Բարտիմէոսն է այդ, որ «կայր նստէր մուրացիկ յանցս ճանապարհին» Երեքովի, զոր Տէրն մեր բժշկեց: Բայց մեզ ծանօթ ուրիշ դէմքեր եւս կան այս մեծ թափօրի մէջ. Բեթանիայի փողոցամէջը կեցողն Ղազարոսն չէ՞ զոր Յիսուս յարոյց 'ի մեռելոց, եւ այն երկու կիներն եւս Մարթա եւ Մարթամ՝ Ղազարու քոյրերը չ'են, որք երեքին եկած են իւրեանց սիրեցեալ Վարդապետին դիմաւորելու: Որքան թափօրը կըմօտենայ մեզ, այնքան լաւ կըճանաչեմք այդ խումբի անհատ անձերն: Ահա Քրիստոսի առաքեալներէն ծերունի Պետրոսն, երիտասարդ Յովհաննէսն եւս Յիսուսի քովէն կըքայլէ. Մատթէոս տեսէք ի'նչպէս պատմագրի աչօք կընայի այդ տեսարանին, իբր թէ կըմտածէ ի'նչպէս եւ ի'նչ ոճով ու լեզուաւ պիտի նկարագրէ այդ անաւոր տեսարան: Թաղէոս եւ Բարթիռլոլիմէոս միասին չըջելով եւ խօսակցելով՝ Միջագետաց եւ Հայոց երկրի նկատմամբ իւրեանց գիտցածը միմեանց կըպատմեն, եւ թերեւս իւրեանց ապագայ գործունէութեան վերայ կըխորհին: Թովմաս մի քիչ հեռուէն կըքայլէ, եւ ազմուկ հանող ոլսաննա կանչող ժողովրդի վերայ կէս արհամարհական կէս տարակուսական աչօք կընայի. իբր թէ ասել կ'ուզէ. «Ձեր անկեղծութեան վերայ շատ կըտարակուսիմ. ի'նչ գիտնամ որ վաղը կամ մի քանի օր վերջն նոյն ձայնիւ եւ նոյն եռանգով «նաչեսցի» չըպիտի աղալակէք»: Միւս կողմն՝ առաքելական թափօրի ամենէն վերջն կըտեսնենք Յուդայ Իսկարիովտացւոյ սոսկալի կերպարանքն, որ կամայ կամաց իւր ընկերների հետ կըխօսի, դէմքը ծումակելով՝ կիսակատար, գրեթէ անհասկանալի բառեր կ'արտասանէ, երկգլխի խօսքերով եւ ոլորմովոր ակնարկութեամբք իւր ունկնդիրը կըշուարացնէ առանց մի բանաւոր իմաստ հաղորդելու: Թափօրի մէջ տեղէն կըքայլէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, սէր եւ օրհնութիւն սփռելով իւր ուղեկցաց, իւրեան ամէն մէկ գիմողին մի քաղցր, մի մխիթարական խօսք ուղղելով, մի օրհնութեան ողջոյն տալով:

Հիմա նայեցէք տեսէք Բեթբազէի նեղ փողոցներէն ովե'ր կըզան: Քրիստոսի երկու աշակերտաց կընմանին. մէկ հատ էջ բռնած կըբերին, որոյ ձագն կամ յաւանակն եւս ետեւէն վաղվապելով, աստ անդ հոտոտելով կըզայ: Եւ անա տէրունական թափօրին մօտեցան, որ Ձիթենեաց

վերան արեւելեան ստորան՝ թանձրախիտ ձիթենեաց եւ բարձրաբերձ արմաւենեաց ներքեւ մի քիչ կանգ առած էին, եւ Պաղեստինոյ տօթակէզ արեւէն մի քանի վայրկեան պատսպարուելով՝ կըզովանային: Բայց երբ Բեթրագէէն եկող աշակերտները տեսան, որ իշոյն սանձը բոնած կը-
 դային, արեւու ջերմութիւնն եւ՛ս իւրեանց յոգնածու-
 թիւնն եւ՛ս մոռացան, մի յանկարծական իրարանցում, ուրախութեան ծափահարութիւն եւ խլացուցիչ աղաղակ. մեծերն յառաջ կ'ընթանային, պղտիկներն կըվազվազէին. շուտով էջը խլեցին երկու աշակերտաց ձեռքէն, եւ խեղճ չորքոտանին չիմացաւ թէ ինչպէս անցաւ մնացեալ հարիւր քայլի չափ ճանապարհն: Բայց էջը մերկ է. համետ չունի. դորա ճարն եւս շուտով գտան հնարիմաց հետեւողք Յիսուսի. իւրեանց վերարկուներն ունէին. այն լայն ասուի հանդերձն զոր մինչեւ ցայսօր Պաղեստինի մէջ գործ կ'ածեն եւ կըկոչին « ապպա (արքա) », « որում փոքր ինչ նման է կամ հաւա-
 սար է տաճկաց եւ պարսից « անպպի » (ջիւրքի) կոչուածն .
 ամեն ոք յառաջ կըվազէ որ իւր վերարկուն ձգէ իշոյն վերայ. մէկ, երկու, երեք. « Հէրի՛ք, » Պետրոս կ'ընգմիջէ: Բայց Բարտիմէոս այնքան դիւրաւ Պետրոսէն կամ Յով-
 հաննէսէն չի համոզուիր. Ես ամենէն աւելի պէտք ունիմ, կ'ասէ, իմ վերարկուն Յիսուսի նստարան շինելու, որ իմ կուրութիւնն այնքան հրաշալի կերպիւ բժշկեց: Բայց ուրիշներ եւս կան որ Յիսուսի շնորհաց եւ բարերարու-
 թեանց նոյնքան ընդունող եղած են որքան Բարտիմէոս. ամենեքին նոքա կ'ուզեն իւրեանց յարգանք ցոյց տալ, եւ բարի զգացմամբ կընախանձին Բարտիմէոսին: Բայց այլ եւս անկարելի էր. քանզի ուզածն համետ էր, ոչ թէ բեռ: Յիսուսի առաքեալք կըստիպուին իւրեանց բոլոր մարմնա-
 լոր ոյժն 'ի գործ դնել այդ ծայրայեղ սիրաշահութեան առաջն առնելու: Շուտով գժրկիչն կընստեցնեն իշոյն վերայ: Բայց ոպեւորեալ ժողովուրդն ոչ Պետրոսի յան-
 դիմանական խօսքերէն, եւ ոչ իւրեանց սրտաբուխ նուէր-
 ները մերժուելուն պատճառաւ կըվհատի. նոքա անմիջա-
 պէս մի ուրիշ միջոց կըհնարեն. իւրեանց վերարկուներ գետինը կըփռեն որպէս զի Յիսուս՝ հեծեալ 'ի վերայ իշոյ
 արքայապէս անցանի ընդ այն: Թափօրն արդէն վերսկսած է ցնձալից աղաղակներով եւ օրհնութեան ձայներով: Իւրաքանչիւր մին կ'աշխատի իւր վերարկուն ամենէն մօտ ձգել Յիսուսի անցանելի ճանապարհի վերայ: Բայց ամեն

խորայեկացի, եւ մասնաւորապէս այդ առթիւ Յիսուսին հետեւող ամեն մանուկ եւ երիտասարդ, ապա կամ ջիւղպի չէր կարող ունենալ : Սակայն կատարեալ սէրն ամեն զգուարութեան ճարը կը գտնէ : Ո՞չ ապաքէն ճիթենեաց եւ արմաւենեաց ծառերն հանդարտ կեցած՝ իւրեանց ներքեւէն անցնող՝ ուրախութեամբ զմայլեալ եւ ցնծութեամբ յաիշտակեալ ժողովրդեան վերայ լուռ ու մունջ ժպտով վար կընային : « Տղայք ծառերն » կը կանչեն մի քանի կտրիչներ . եւ անմիջապէս երիտասարդաց համայն խումբը կը յարձակի այդ խորհրդաւոր ծառոց վերայ . շատ վայրկեաններ չի տեսեր ծառոց մերկացման զործն . եւ ահա ամբողջ ճանապարհն թարմ ոստերով կը ծածկեն , եւ միանգամայն իւրաքանչիւր ոք մէկ ոստ ձեռքն առած , — « ծերքն ոստովք ճիթենեօք եւ տղայքն ոստովք արմաւենեօք , » — թափօրը կը շարունակեն , որով հեռուէն նիզակաւոր զօրաց գունդի կընմանէին : « Եւ որ առաջին եւ զկնի երթային՝ աղաղակէին եւ ասէին . ոյսաննա Բարձրելոյն . օրհնեալ որ զասդ յանուն Տեառն . օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի , խաղաղութիւն յերկինս եւ փառք՝ ի բարձունս » :

Հիմա որ թափօրն այլ եւս բոլորովին մօտեցաւ մեզ , մի քիչ աւելի մօտէն նայիմք այդ ժողովրդեան վերայ : Կըտեսնեմք որ ամենքն եւս Յիսուսի անկեղծ բարեկամներ եւ սիրասուն աշակերտներ չեն . Յուդայէն զատ , բաւակա նաչափ կեղծաւոր փարիսեցիներ եւս կան , որ եկած են կա՛մ իւրեանց ունայնասիրութիւն եւ անստուգութիւն յագեցնելու . կա՛մ իբրեւ լրտես՝ Յիսուսի բերնէն ըստ հրէից կարծեաց մի դատապարտելի խօսք լսեն կամ քաղեն , որպէս զի կարենան՝ ի հարկին վկայութիւն տալ նորա դէմ , կամ լուր տանել քահանայապետից եւ դպրաց : Եւ ահաւասիկ մին՝ ի նոցանէ կըմերձենայ Յիսուսին եւ իւր շուրջն տիրող ցնծալից աղաղակներն ընդմիջելով՝ կ'ասէ . « Վարդապետ , սաստեա աշակերտացդ քոց » . իբր թէ ասել կ'ուզէ՝ Քո անձին ուղղեալ փառաբանական այս աղաղակն մեր փարիսէական խումբին անհաճոյ , անտանելի է : Անշուշտ անտանելի էր . ուրիշ ոչ այլ ինչ կարէր լինել . վասն զի մինչդեռ նոքա կը խորհէին զայն կործանել , ջախջախել , ինչպէս արգէն քանիցս՝ ի զուր փորձած էին , նա առաւել եւս կը փառաւորուէր իւր իսկական արժանեօքն , եւ ժողովուրդն ու համայն ազգն , հակառակ

փարիսեցոց դրդմանց եւ զրպարտութեանց, նորա երախտիքն լաւ կըճանաչէր: Այս վստահութեամբ, հանդերձ իւր աստուծային զօրութեան գիտակցութեամբն, Յիսուս կըպատասխանէ. «Ասեմ ձեզ, զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն:» Աստուածային զօրութիւն, կատարեալ արժանիք, իրական երախտիք եւ առաքինութիւն, ուչ կամ կանուխ պիտի փայլին անպատճառ արեգական պայծառութեամբ. 'ի զուր կ'աշխատին չարանախանձ մարդիկ զայն ծածկել, կամ զրպարտութեամբ եւ վստահամբաւութեամբ աղարտել: Ինչպէս ջրոյն մէջ թափած ձէթն անպատճառ երեսը կըկանգնի, նոյնպէս Աստուածորդուն փառքն ու նորա ճշմարիտ աշակերտի լոյսն պիտի լուսաւորէ ամբողջ աշխարհն: Ուրեմն 'ի զուր կըբարբաջես, կեղծաւոր փարիսեցի, եւ ինքզինքդ նախանձու կ'այրես ու կ'ուտես. վասն զի «եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն»: Եթէ մինչեւ իսկ քո նենգաւոր դիտաւորութիւնդ 'ի գլուխ հանես, զայն գասապարտես, չարչարես, խաչին վերայ կախես, սպանանես եւ թաղես, գիտցիր որ յերիբ յաւուր առաւել մեծ փառօք յարիցէ եւ դեռ աւելի մեծամեծ փառաց պիտի արժանանայ. իսկ դու, ողորմելի փարիսեցի, պիտի միայն ամօթահար եւ կորագլուխ խայտառակուիս:

Զիարդ եւ իցէ, սիրելի ժողովուրդ, թողնենք այս փարիսեցիներ եւ իւրեանց չար նախանձ, եւ յիսուսեան թափօրին մէջ խառնուինք որ արդէն մօտեցած է սուրբ քաղաքին, որոյ տաճարի փառաւոր եւ սքանչելի շէնքը կըփայլի արեւու ճառագայթից ներքոյ. եւ որքան կըմօտենան քաղաքի դրան, այնքան աւելի կըզօրանան եւ կըբաղմանան ովսաննայի փառաբանութեանց ձայներն. վասն զի, հետզհետէ քաղաքը մտնող որպէս եւ քաղաքէն դուրս ելնող ժողովուրդը կըյարէր Յիսուսի աշակերտաց եւ հանդէսը կըմեծացնէր: Վերջապէս քաղաքը կըմտնեն եւ դէպ 'ի տաճարը կ'երթան: Յիսուս վար կ'իջնայ իշոյ վրայէն եւ կըբարձրանայ աստիճաններն որ կըտանին սրբազան շէնքին գուռն: Ժողովուրդն եւս սուրբ տաճարի մերձակայութեան կըպատկառի, ոմանք կ'երթան իւրեանց բնակարաններ, այլք աւելի հանդարտութեամբ կըհետեւին: Տաճարի գաւիթը մտնելով կըտեսնէ որ շուկայի պէս մի բան հաստատած էին անդ հրեայք, եւ առեւտուր կ'անէին նուիրական յարկին ներքոյ. արջառ, ոչխար եւ աղանի

կրվածառէին, եւ սեղանաւորք եւս իւրեանց դրամներ սեղաններու վերայ դիզած՝ լուծայափոխութեամբ բազմաշահ գործեր կըկատարէին. եւ այս ամենը յանուն կրօնի՝ եւ հրեայ ուխտաւորաց դիւրութիւնն ընծայելու պատրուակաւ կըկատարուէր, որպէս զի ընծայարեութեան եւ զոհի համար յարմար արջառ եւ ոչխար եւ ազաւնի կարենային պատրաստի եւ դիւրաւ գնել, եւ տաճարի նուիրական տուրքերն հրէական դրամով վճարելու նախանձախնդրութեամբ լուծայափոխք օտար դրամները կըփոխէին, կըմանրէին եւ այլն, որով հաւանօրէր բաւական հասոյթ եւս կըբերէին տաճարի գանձին, նման այն յոռի սովորութեան որ աւա՛ղ բազում ուրեք առ մեզ եկեղեցւոյ դրան մոմ ու ձէթ կըվաճառեն, եւ աւելի մեղմ կերպիւ լուծայափոխութեան պէս մի բան եւս ունին, երբ օրինակի համար երկու զուրուշնոց արծաթ դրամ պնակը ձգելով՝ նուիրասուն իւր սրաէն բղխած քանակութեամբ մէթաւիքներ կըվերցնէ, եւ ոչ սակաւ անգամ թաղականին խոր մտատանջութեան եւ կասկածի մէջ կըձգէ՝ թէ արդեօք այդ առեւտուրով ո՞վ շահեցաւ՝ նուիրատուն թէ Աստուծոյ տուն՝ :

Ինչ եւ իցէ թողնենք մեր մասնաւոր զեղծումներն, եւ դառնամք Երուսաղէմի սուրբ տաճարի գաւիթն ուր Տէրն մեր մօտեցած է այն սրբապիղծ վաճառականաց՝ զայրացմամբ կըխօսի եւ կըհրամայէ որ անմիջապէս դուրս տանին իւրեանց վաճառք: Ոմանք պատասխան չեն տար, այլք կ'ընդդիմանան կըմերժեն. որով տաճարի երկնաւոր Տէրն առաւել եւս կըցասնու, լուծայափոխաց սեղանները կըզարնէ կըխորտակէ, եւ ստակները կըցրուէ գաւթին մէջ, մի քանի ըմբոտոտներն եւս չուանեայ խարազանով կըծեծէ կ'արտաքսէ, աղաւնեւաճառաց եւս սաստկապէս կըսպառնայ որ իւրեանց ապրանքներ չուտով դուրս տանին, «Առէք զայդ աստի, եւ մի՛ առնէք զտունն Հօր իմոյ տունն վաճառի», կամ ինչպէս միւս աւետարանիչն կ'աւանդէ, «Տուն իմ տուն ազօթից կոչեսցի, եւ զուք արարէք զդա այլս աւաղակաց», այն ժամանակի առեւտրականաց խարզախ եւ կեղեքիչ գործառնութեանց ակնարկելով:

Իայց պիտի խորհիք թէ ի՛նչ օգուտ ունի որ մեր քահանայն ստէպ կըյեղյեղէ մեր ականջին այս երկու հազարամեայ անցած դացած պատմութիւն: Եթէ տաճարն ասելով մեր (Մանչէսթրի) եկեղեցին կըհասկանայ, փառք

Աստուծոյ, մեր եկեղեցին լաւ կը պահենք, հրէից պէս զայն չենք սրբապղծեր, ոչ եւս բանկալ մի ունիւմք, եւ ոչ մոմավաճառութիւն կը ներեմք, պնակ եւս շատ չենք շրջաբերեր. ուրեմն ի՞նչ է այս ամենն: Ո՛չ, սիրելի ժողովուրդ, ոչ այս քարուկիր շէնքն է եւ ոչ որ եւ է մի ուրիշ աղօթատեղի որ մասնաւորապէս կը ոգեւորէ զիս այսօր: Այս սրբազան շէնք, իւր բոլոր ամբողջեան հանդերձ, կարէ երկրաշարժէ փլչիլ կամ հրեհի ճարակ դառնալ, կամ մի որ եւ է ուրիշ արկածի հանդիպել. կամ թերեւս դուք խկ մէկ օր քանդէք կամ վաճառէք եւ ձեր բնակութեանց մի աւելի մօտ վայրի մէջ մի նոր եկեղեցի կառուցանէք: Քրիստոսի ցոյց տուած խստութիւն աւաջին Ծաղկազարդին ոչ այնքան իրրեւ սողմոնեան նիւթական տաճարի վայելչութեան համար կը նկատեմ որքան այն մեծ բարոյական դասն աւանդելու զոր այս անցք կը պարունակէ: Քրիստոս այսօր Սողոմոնի տաճարին մէջ ցոյց կը տայ իւր նախանձայնութիւն այն սուրբ տաճարի համար զոր « մեծն քան զՍողոմոն », նա ինքն Տէրն մեր, իւրաքանչիւր քրիստոնէի հոգւոյն մէջ կառուցած հաստատած է: Հաւատացեալ քրիստոնեայ, գիտես անշուշտ որ երբ նորածին մանուկ մի էիր, հայրդ եւ մայրդ եւ կնքահայրդ առին սարան զքեզ քահանային, որ զքեզ մերկացուցեալ՝ իւր ձեռքն առաւ եւ սուրբ աւագանի ջրոյն մէջ երիցս ընկզմելով՝ մկրտեց յանուն ամենասուրբ Երրորդութեան, միանգամայն արտասանելով. « Գնեալ արեամբն Քրիստոսի, ընդունի որդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինել ժառանգակից Քրիստոսի եւ Տաճար Հոգոյն Սրբոյ »: Ահա այդ տաճարն է, սիրելի ժողովուրդ, որ աւելի հաստատուն, աւելի փառաւոր, աւելի հոյակապ, աւելի սրբազան է քան զսողմոնեանն տաճար: Այս այն տաճարն է որոյ մասին երկնածիր բանաստեղծն Միլտոն կը հառաչէ: —

« Նա դու Հոգի՛դ, որ քան զտաճարս ըզսիրտ սիրես զուղիդ եւ սուրբ »: Այս այն տաճարն է որոյ համար պատարագիչ քահանայն Ս. Գրիգոր Նարեկացւոյն խօսքերովն կ'աղօթէ առ Հոգին սուրբ՝ ասելով. « Որ զսուրբսն պահես, եւ զմեղուցեալսն մաքրես՝ եւ տաճարս կազմես կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձրեալդ Հօր »: Այդ կենդանի տաճարն մեզմէ իւրաքանչիւր մին իւր սրտին մէջ կը կրէ. եւ ամեն սարի երբ Ծաղկազարդի ասօր կը վերադառնայ, Տէրն մեր Յիսուս անաւոր թափօրով, հրեշտակաց օրհներգութեամբ եւ ովսաննայի փա-

ուաբանութեամբ Դաւթի սուրբ քաղաքն, նոր Սիոնի՝ իւր ընտրեալ եւ արեամբ գնեալ ժողովրդեան մէջ կրմտնէ, եւ ո՛վ հաւատացեալ քրիստոնեայ, քո սրտի տաճարը պիտի մտնէ. պատրաստ ես զայն ընդունելու, պատրաստած ես « զոստս ծաղկեալս հաւատով » երկնաւոր թագաւորիդ առջեւ սփռելու համար. սուրբ եւ մաքուր պահած ես հոգւոյդ տաճարն, որոյ մէջ զայն պիտի ընդունիս, թէ արջառ ու ոչխար ու աղաւնի վաճառելու շուկա՛յ դարձուցած ես, լուծայափոխութեան յա՛րկ չիմած ես, ա՛յր աւազակաց փոխած ես Հոգւոյն սրբոյ նուիրեալ տաճարն: Մի՞ գուցէ այդ նուիրական եւ իմանալի չէնքին մէջ առեւտուր կ'անես, յԱստուծոյ պարգեւեալ երկնային բարիքներն, արգարութիւնն, առաքինութիւնն, սէր, այլովքն հանգերձ կըծախես նիւթական չնչին շահու փոխարէն, անիրաւութեան փոխարէն, մոլութեան փոխարէն, ատելութեան փոխարէն: Մի՞ գուցէ ալաւնեաց այն մաքրութիւնն ու միամտութիւնն, զոր Տէրն մեր գովեց, որոյ կերպարանօք կօթնարփեան շնորհաց բաշխօղ Ս. Հոգին էջ 'ի Յորդանան եւ 'ի վերնատունն, կրվածառես եւ փոխարէնը կ'առնուս Ս. Հոգւոյն ատելի եւ անտանելի եղող կօթնեակ մահացու մեղս: Մի՞ գուցէ Աստուծոյ անուն եւ պատկեր կրող՝ անմահ հոգւոյդ յաւիտենական քանքարն կըփոխանակես սառանայի պատկեր կրող եւ աշխարհային ու մեղանչական ցանկութեամբ դրոշմալ՝ վաղանցիկ եւ կորստական ընչից եւ գոյից հետ:

Եթէ այդպէս է, ուրեմն, շտապէ՛, ե՛լ. շուտով դուրս տար այդ խասակար եւ սրբապիղծ առարկայներ սրտիդ տաճարէն, ապաշխարութեան եւ խոստովանութեան աւելով վեր 'ի վայր սրբէ՛ ու մաքրէ՛ զայն. Քրիստոսի սուրբ արեամբն լուս' ողողէ՛ յարկ ու յառակ. քանզի անա մօտեցած է տէրունական թափօրն. երբայցեցի մանկանց եւ հրակերպեան դասուց օրհնաբանութեանց ձայներ արգէն կըլսուին. դու եւս սթափէ՛ եւ պատրաստուէ՛. դու եւս վազէ՛ դիմաւորէ՛ երկնաւոր թագաւորիդ. եւ արժանաւոր բերանով գոչէ՛. « Ովսաննա 'ի բարձունս, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. օրհնեալ որ գալոցդ ես ». Ամէն:

ԱՐԱՆՊՈՒԹԻՒՆ ԷԱՅԱՍՏԱՆԵԱՅՅԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ

1. Ո՞վ էր Թադէոս եւ ո՞վ էր Բարթուղիմէոս

Ձկնի համբարձման Տեառն կը մնար որ Արգարու եղած խոստումն կատարուէր, ըստ բանին թէ «յորժամ վերացայց առ Հայր, առաքեցից առ քեզ մի յաշակերտաց իմոց, զի բժշկեսցէ զքեզ եւ զամենայն ժողովուրդդ ք» որ ընդ քեզ եւ դարձուցէ զքեզ 'ի կեանսն յաւիտեանականս :» Բոլոր հայ որպէս եւ օտարազգի պատմիչք կը վկայեն թէ զկնի վերանալոյ Տեառն, նախաձեռնութեամբ Թովմաս առաքելոյն, որ արդէն Փրկչի խոստման քաջ ծանօթ էր, վասն զի, ըստ Խորենացւոյն, ինքն գրած էր Արգարու թղթոյն պատասխանն հրամանաւ Տեառն, կամ բերանացի թարգմանած էր Արգարու սուրհանդակին Փրկչի պատասխանն : Քրիստոսի առաքելոց գործունէութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնք այնքան սակաւ եւ անստոյգ են, որ մեզ հասած հատուկոտոր աւանդութիւնք շատ անդամ անհասկանալի կ'երեւին : Օրինակի համար, չգիտեմք թէ ընդէ՛ր Թովմաս իւր վերայ կ'առնու ուրիշ մէկը զրկել յԵդեսիա փոխանակ ինքն անձամբ գնալու : Արդէն 'ի մէջ երկրորդ դարու աւանդաբար կը պատմուէր թէ առաքեալք, զկնի համբարձման Տեառն, ընդհանուր եկեղեցւոյ համար օրէնքներ հաստատելով՝ ամբողջ աշխարհն վիճակարկութեամբ իւրեանց մէջ բաժանելին, որով պարթեւաց, սսորւոց եւ հնդկաց երկիրներ Թովմասին վիճակուեցան. եւ այս առաքելոյն քարոզութեան աւանդութիւններ մինչեւ ցայսօր յիշեալ աշխարհ մէջ պահուած են, ինչպէս ներկայ քաղաքսսորւոց աւանդութիւնք, եւ Հնդկաստանի Մալաբար ծովակողման բնիկ հին քրիստոնեայ հասարակութիւնք, որ «Ս. Թովմասի քրիստոնեայ» կը կոչուին, կենդանի վկայ են : Բայց հաւանական կը թուի որ 'ի սկզբան Թովմաս եւ Թադէոս, գուցէ նաեւ ուրիշ ընկերներով եւ աշակերտներով հանդերձ, միասին ճանապարհորդեցին դէպ

'ի արեւելեան հիւսիս եւ ապա բաժանուեցան, Թաղէոս մնալով 'ի Միջագետս, իսկ Թովմաս շարունակելով իւր առաքելական ուղեւորութիւն:

Բայց նախ հարցանեմք՝ ո՞վ էր Թաղէոսս այս: Մերազգի որպէս եւ օտար պատմիչներէն ոմանք կը համարին զսալինել մին յերկոտասան առաքելոց Քրիստոսի, իսկ այլք կը կարծեն թէ այդ անունը կրող՝ Քրիստոսի եօթանասուներկու աշակերտներէն մին էր նա:

Քիտեմք 'ի Ս. Գրոց որ Քրիստոսի երկոտասան առաքելներէն մին՝ Թաղէոս մականունն ունէր. այսինքն, այն որ Մատ. Ժ 3 Ղերէոս, եւ Ղուկ. 2 16 Յուզա Յակոբեան կը կոչուի: Թէ եօթանասուներկու աշակերտաց մին եւս Թաղէոս անունը կը կրէր՝ Ս. Գրոց մէջ աւանդուած չէ, բայց եւ այնպէս անհաւանական չէ: Սակայն տարակոյս չկայ որ Արգար թագաւորին հոգւոյ եւ մարմնոյ առողջութիւն բերող եւ 'ի Հայս Աւետարանն զառաջինն քարոզող Թաղէոսն՝ հնազոյն դարուց մէջ եւ մասնաւորապէս մեր եկեղեցւոյ սուրբ հարց վկայութեամբ՝ իբրեւ մին յերկոտասան առաքելոց համարուած է: Անյիշատակ ժամանակէ հետէ մեր եկեղեցին կը կատարէ զտօն «Սրբոց առաքելոց եւ առաջին լուսաւորչացն մերոց Թաղէոսի եւ Բարթուղիմէոսի:» Թէ Բարթուղիմէոս մին յերկոտասան առաքելոց անտի էր՝ ոչ ոք կը տարակուսի: Ուրեմն երբ Թաղէոսի եւ Բարթուղիմէոսի անուամբ միասին կը յիշուին իբրեւ առաքելաց (մանաւանդ երբ Թաղէոս կը նախադասուի,) այլ եւս որ եւ է տարակոյս չի մնար թէ մեր եկեղեցին զերկոսին առաջին լուսաւորիչս Հայոց՝ առտիճանակից առաքելալս Քրիստոսի կը համարի:

Ս. Սանդխտոյ նուիրեալ շարականն կ'առէ, «Աշակերտեցար առաքելոյն Թաղէոսի եւ 'ի հաւատս ճշմարիտոս հոստատեցար:» Թէպէտ եւ երբեմն առաքելաց բառն երկոտասանից խումբէն դուրս եղող քարոզչաց եւս համեմատութեամբ իմն տրուած է օտարազգի հեղինակներէ, բայց առ մեզ սոյն մտօք գրեթէ երբէք գործածուած չէ, եւ մեր եկեղեցական մատենից եւս բոլորովին անծանօթ է առաքելաց բառի այգօրինակ գործածութիւն. ըստ որում վերոյիշեալ շարականն ոչ այլ ինչ կարէ նշանակել բայց եթէ Թաղէոս՝ Ս. Սանդխտոյ հոգեւոր հայրն՝ էր իրօք Ղերէոս կամ Յուզա Յակոբեան, այսինքն, մին յերկոտասան առաքելոց Քրիստոսի:

Թէ Հայաստանեայց եկեղեցւոյ այս աւանդութիւնն արդէն 'ի չորրորդ դարու ընդունուած եւ հաստատուած էր նաև յօտարազգի քրիստոնէից՝ յայտնի է Կեսարիոյ Ղեւոնդիոս եպիսկոպոսի առ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ուղղեալ թուղթէն, յորում կ'ասէ. « Եւ արդ քանզի քեւ ծագեաց արեգակն արդարութեան Գրիստոս 'ի դոսա (այսինքն, 'ի հայ), եւ դու ընտրեցար 'ի սեղի ընտրելոց սրբոց առաքելոցն Բարթուղիմէոսի եւ Թադէոսի, իշխեա զնոցա նահատակութիւն, եւ այլն: » (1)

Աւելորդ է յետագայ դարուց հայ եւ օտարազգի հարց բազմաթիւ վկայութեամբք երկարել խօսքս: Կրքաւէ միայն յառաջ բերել Ս. Ներսէս Լամբրոնացւոյ Պենտեկոստէի ճառէն մի փոքրիկ հատուած, որ լիովին ցոյց կրտայ թէ Տարսոնի համբաւաւոր եպիսկոպոսն, որ թէ՛ իւր նախնեաց կարծիքներ այս մասին լաւ ուսումնասիրած էր եւ թէ՛ մինչեւ երկոտասաներորդ դարն հասած եկեղեցւոյ աւանդութեան քաջ ծանօթ լինելու էր, ամենեւին չի տարակուսիր Ս. Թադէոսի մին յերկոտասանից լինելուն վերայ: Լամբրոնացին կընկարագրէ հրեղէն լեզուաց իջումն եւ Ս. Հոգւոյն ակրեցութիւնն 'ի վերայ առաքելոցն 'ի տօնի Պենտեկոստէից, յորժամ նոքա լցեալ Հոգւով սրբով « սկսան խօսել յայլ լեզուս, » եւ իւրաքանչիւր առաքելոյն Աւետարանի մէջ դրոշմուած ցուցակի կարգաւ կը վերագրէ այն աղգի կամ երկրի լեզուն, որոյ լուսաւորիչ համարուած է նա աւանդաբար. եւ երբ կարգը կը հասնի Թադէոսին, կ'ասէ. « Թադէոսն այն տիմար, տեսէք, որքան վայելուչ Մեծաց Հայոց բառիւքն զբանս իւր յօդէ: » (2)

Այս եւս գիտնալու է, որ երբ ոմանք հին պատմիչք կը պնդեն թէ Թադէոս կամ Աղէոս մին յեթմաստուն եւ երկու աշակերտաց էր եւ կը հաստատեն Լաբուրնեայ, Եւսեբիոսի եւ այլոց վկայութեամբ, այդ կարէ միայն նշանակել, ինչպէս Միխայէլ Ասորի պատշաճաբար կը գրէ,

(1) Ջենոբ Գլակ, Պատմութիւն Տարսուոյ (Վենետիկ 1832), էջ 10: Թէ Ջենոբայ Պատմութեան ուրիշ ձեռագիրներ ըստ ընդհանուր սովորութեան հայ մատենագրաց « Թադէոս » չեն նախադասեր՝ տակաւին յայտնի չէ: Յամանայն դէպս անհասկանալի պիտի լինէր Ս. Ղեւոնդեայ՝ առաքեալ բառի գործածութիւնն այստեղ, եթէ Թադէոս եւ Բարթուղիմէոս երկու տարբեր աստիճանի (մըն առաքեալ եւ միւսն աշակերտ) անձինք լինէին:

(2) Ճաշոց Գիրք, Պատկեր Շոգեգալստեան, Ճառ Ս. Նիքսեսի Լամբրոնացւոյ:

Թէ երկոքին Թաղէոսք, եւ՝ առաքեալն եւ՝ աշակերտն, հայոց մէջ Աւետարանն քարոզեցին : (3)

2 . Ս. Թաղէոսի Ժամանումն յԵղեսիա .

Հայոց երկոցուն նախկին լուսաւորչաց անձնական հանգ գամանքն քննելէ յետոյ, դառնամք այժմ՝ ՚ի կարգ պատմութեան :— Փրկչի համբառնալէն քիչ յետոյ Ս. Թաղէոս Եղեսիա կրնասնի, եւ կամ հարցուփորձով կամ նախածանօթութեամբ կամ յանձնարարութեամբ կրտեղեկանայ որ այդ քաղաքի մէջ Տուբիա անուամբ մի նշանաւոր հրեայ իշխան կայր, ՚ի Հայս ապաստանող բազրատունեաց նախարարական ցեղէն, որ իւր հրէական կրօնին հաւատարիմ մնալու աղաղաւ ստիպուած էր Արշամայ բռնութենէն խոյս տալով՝ յԵղեսիա փախչել, ուր երեւի սիրալիբ ընդունելութիւն գտած էր Արգարու կողմանէ, որ աւելի ազատախոհ ցոյց տուած էր ինքզինքն ՚ի մասին կրօնի քան թէ իւր հայրն : Քրիստոնէութիւնն իսկզբան հրէական ազգի մէջէն բղխած լինելով, եւ Աւետարանի առաջին քարոզիչք աղգաւ հրեայ լինելով, բնականաբար առաքելական դարու քրիստոնեայք, որ ըստ մեծի մասին հրեայ էին, աւելի մտերմութիւն ունէին իւրեանց հայրենակից եւ ազգակից եղող հրէից հետ քան թէ այլազգի հեթանոսաց հետ : Ուստի Ս. Թաղէոս Տուբիայ իշխանի տանն իջեւանելով՝ այն սեղէն կրսկսի իւր առաքելական գործունէութիւն : Որքան յառաջագոյն տեղեակ էր Արգարու բարեպաշտութեան մասին, եւ Ս. Թովմասէն եւս առանձինն յանձնարարուած էր՝ ամենէն յառաջ Արգարին բերել Ս. Աւետարանի պատգամն, դարձեալ երեւի յարմար դատեցաւ նախապէս իւր կրօնակցի եւ ազգակցի տանն իջեւանել, եւ անտի Արգարու ներկայանալ : Սակայն Ս. Թաղէոսի հրաշից եւ քարոզութեանց լուրն իւրմէ յառաջ հասաւ թագաւորին, որ անմիջապէս իւր ներկայութեան հրաւիրեց զսրբազան առաքեալն եւ պահանջեց . « Եթէ դո՞ւ իցես արգարեւ աշակերտ օրհնելոյն Յիսուսի, զոր ասաց առաքել ինձ այսր, եւ կարո՞ղ իցես բժշկել զցաւս իմ : » Թաղէոս կրպատասխանէ թէ արգարեւ այնպէս է, նա ինքն է Յիսուսէ զրկուած աւետարաւ

(3) Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն (Երուսաղէմ, 1871), էջ 101, 103, տես Լաբուրնեայ Թուղք Արգարու, (Վենետիկ, 1898) էջ 6, ծան. 2 :

նիչն եւ բժիշկն, եւ կրպանանջէ որ թագաւորն միայն հաւատայ 'ի Քրիստոս Յիսուս, եւ նորա սրտի խորհուրդն եւ ինդրուածքն պիտի կատարուին անշուշտ: Աբգար իւր հաւատոյ ջերմութիւնն ցոյց տալով կ'ամէ՛. « Ես հաւատացի 'ի նա եւ 'ի հայրն նորա՝ վասն որոյ կամեցայ առնուլ զզօրս իմ եւ զալ կոտորել զհրեայսն, որ խաչեցին զնա, եթէ ոչ էր արգելեալ վասն թագաւորութեանն հռովմայեցւոց:» (4)

Երբ Աբգար յետ այնորիկ առաքելական ձեռնադրութեամբ եւ ազօթ իւրք իւր երկարամեայ հիւանդութենէն բժշկեցաւ, առաւել եւս հաստատեցաւ 'ի հաւատս Յիսուսի, որոյ անուամբ եւ զօրութեամբ գտած էր բժշկութիւնն. եւ իբրեւ բարի օրինակ իւր հպատակաց՝ ինքն եւ ամենայն տուն իւր ամենէն յառաջ մկրտուեցան: Աւետարանի առաջին քարոզութեան եւ տարածման համար անհրաժեշտ համարուած էր գերբնական զօրութեամբ եւ նշանօք հաստատել Քրիստոսի երկնային օժումն: Քրիստոս ինքն երկնից արքայութեան ճանապարհն մարդկան ցոյց տալու միջոցին իւր աստուածային զօրութիւնն 'ի գործ կրդնէր հիւանդներ եւ ախտածէտներ բժշկելով, եւ այս շնորհն եւս իւր առաքելոց եւ առաջին աշակերտաց աւանդեց որպէս զի իբրեւ առհաւատչեայ իւրեանց քարոզութեանց, մարդկային ազգի հողոց ախտերի հետ մէկ տեղ, նաեւ նոցա մարմնաւոր ախտերն բժշկէին: Ուստի Ս. Թադէոս՝ Աբգարու հիւանդութիւնը բուժելէն յետոյ, նաեւ Եղեսիա քաղաքի Աբգրիսս իշխանի կամ քաղաքապետի բաղմամբայ ոտնառութեան հիւանդութիւնն առողջացոյց յանուն Յիսուսի. « նա եւ զամենայն՝ որ էին 'ի քաղաքին հիւանդք եւ ախտածէտք, բժշկեաց:» Անտարակոյս Աբգարու եւ Եղեսիոյ արքունեաց բարի օրինակն եւ բարոյական ազդեցութիւն միծապէս նպաստեցին Աւետարանի տարածման՝ Եղեսիոյ քաղաքի եւ գաւառի մէջ. եւ թէպէտ կրկարգամբ թէ «զուրո՞ տաճարաց կուոցն փակիցին. եւ որ 'ի վերայ բազնին եւ սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ,» (վասն զի նախկին քրիստոնեայք զկռապաշտութիւնն իբրեւ յայտնի գործ եւ դիմադրութիւն

(4) Վկայաբանուցին Ս. Թադէի Առաքելոյ եւ Սանդիստոյ կուսին, Սովերբ Շայիականք, Շատոր Ը, յորմէ գլխաւորաբար քաղուած է սոյն պատմութիւն, հանդերձ քաղաքապետի ընդ Լաբուբնեայ, Էւսերեայ, եւ խորենացոյն եւ ընդ այլոց հայ պատմեաց:

սատանայի կրհամարէին, եւ նորա հրապարակային պաշտօնի թոյլտուութիւն մի քրիստոնեայ թագաւորի կողմանէ՝ ղքրիստոնէութիւնն ուրանալու չափ մեղք կրհամարուէր․) բայց եւ այնպէս « ոչ զոք ածէր բռնութեամբ 'ի հաւատս, բայց օր ըստ օրէ յաւելեալ 'ի հաւատացեալսն բազմանային : »

Կ'աւանդուի նաեւ թէ Եղեսիա քաղաքի դրան պլխին մի հեթանոսական կուռք կար դրուած, որում քաղաք մտնողներ երկրպագութիւն մատուցանելու սովոր էին : Զայս արձան վերցնել կրտայ Արգար, եւ նորա տեղն իւր սուրհանդակի ձեռքով Երուսաղէմէն բերուած փրկչական պատկերը կըդնէ :

3. Հաստատութիւն Եկեղեցւոյն Եղեսիոյն .

Դժբախտաբար պատմութիւնը շատ քիչ տեղեկութիւն թողած է մեզ Եղեսիոյ եկեղեցւոյ նախկին զարգացման եւ անցից մասին : Միայն այսքանը գիտեմք, որ Եղեսիայէն մեկնելէն յառաջ, Ս. Թադէոս զԱզգէ մետաքսագործ ոմն, որ Արգարու խոյրարար լինելու պատուոյ պաշտօնն ունէր, եպիսկոպոս ձեռնադրեց 'ի վերատեսչութիւն նորահաստատ եկեղեցւոյն : Այսպէս Ազգէ եղաւ Ս. Թադէոսի անդրանիկ ձեռնադրեալ եւ հետեւաբար Հայաստանեայց եկեղեցւոյ առաջին եպիսկոպոսն :

Արգար մինչեւ վերջն հաւատարիմ մնաց Ս. Աւետարանին, եւ իւր ջերմ եռանդն նորա պայծառութեան եւ տարածման համար որ եւ է իւրիք չպակասեցոյց, այլ առաւել եւս աշխատեցաւ ըստ կարի տարածել այն լոյսն որով իւր միտք եւ հոգի լուսաւորուած էր : Նամակներ գրեց առ Տիբերիոս կայսր, առ Ներսէհ արքայ Ասորեստանի եւ առ Արտաշէս պարսից թագաւորն, աւետելով նոցա այն երկնային ճշմարտութիւն զոր ինքն ընդունած էր, եւ յորդորելով զնոսա որ նոքա եւս ընդունին զայն եւ իւրեանց պետութեանց մէջ տարածեն : Ահա՛ քրիստոնեայ թագաւոր մի որ իւր աստիճանակից հեթանոս եղբարց կըզրէ 'ի նպաստ Քրիստոսի, եւ զնոսա 'ի հաւատս կը հրաւիրէ, մինչդեռ մեզմէ ամենէն լաւ համարուածն իսկ չի համարձակիր իւր քրիստոնեայ եղբորն թելադրել Ս. Աւետարանի եւ Ս. Եկեղեցւոյ ամենատարրական պարտուց կատարումն : Զգիտեմք թէ Արգարու վերոյիշեալ թղթակցութիւնք որ եւ իցէ արդիւնաւոր հետեւանք ունեցան, բայց երեւի

նորա, որոց ուղղուած էին այդ թուղթք, իբրև քաղաքալարական արտայայտութիւն նկատելով զայնս, ըստ այնմ պատասխանեցին, մանաւանդ որ յետ այնու Արգար շատ չսպրեցաւ իւր առաքելութեան գործն աշխարհիս վեհագոյն դասակարգի մէջ յառաջ տանելու: Սակայն Ադգէ եպիսկոպոս եւ իւր հաւատացեալ ժողովուրդն քրիստոնէութիւնը տարածելու որ եւ է ջանք չխնայեցին, եւ մինչեւ իսկ 'ի Պարսկաստան քարոզիչներ յղեցին եւ Աւետարանի փրկարար պատգամն զառաջինն այդ երկրի մէջ հռչակեցին:

4. Ս. Թագէոս 'ի Մեծն Հայս. դարձ Սանդխոյ կուսից եւ այլոց բազմաց.

Իսկ ինքն Թագէոս, « առեալ հրովարտակ յԱրգարէ, զի ամենեքեան լուսիցեն Աւետարանին Գրիստոսի, » կ'անցնի 'ի Մեծն Հայս, եւ կը ներկայանայ Սանատրուկ թագաւորին, « 'ի գաւառին Արտաշ, 'ի քաղաքագիւղն Շաւարչան: » Իսկզբան սիրալիբ ընդունելութիւն կը դոնէ Սանատրուկէն, եւ այդ նպաստաւոր պարագայի շնորհիւ յայտնապէս « քարոզէր զբանն կենաց, առնէր նշանագործութիւն 'ի դրան արքունի, եւ բժշկէր զամենայն ախտս չար հիւանդութեանց, զոր տեսեալ բազումք հաւատացին 'ի Գրիստոս: » Ոմանք կը պատմեն թէ Սանատրուկ ինքն եւս մկրտուեցաւ, այլ յետոյ ուրացաւ, եւ ինչպէս պիտի տեսնենք, քրիստոնէութեան եւ քրիստոնէից անողոք հալածիչ դարձաւ: Նորահաւատից մէջ ամենէն նշանաւորն էր Սանդխոս՝ գուտար Սանատրուկոյ որ գիշերով մկրտուեցաւ ձեռամբ սուրբ առաքելոյն:

Թագաւորի առաջին ներողամտութեան շնորհիւ, իսկըզբան յայտնի հակառակութեան չհանդիպեցան Արտաղուքրիստոնեայք: Բայց հայ նախարարք, որք 'ի կենդանութեան Արգարու չէին համարձակած հակառակել, զկնի մահուան նորա միացան քուրմերի հետ, եւ հեղհեղէ յաջողեցան Սանատրիոյ միաքն դարձնել ընդդէմ նոր կրօնին. եւ մանաւորապէս Սանդխոսոյ դարձն ու մկրտութիւնն բոլորովին զայրացոյց զթագաւորն քրիստոնէից դէմ, զորս հրամայեց հալածել, եւ զբազումս, ընդ որս եւ զգուտարն իւր զՍանդուխոս, բանտարկել տուաւ: Բայց ինչպէս հալածանքն ամենուրեք զքրիստոնէութիւնն միայն

առաւել եւս տարածելու ծառայած է, նոյնպէս եւ 'ի Հայս: Ի Գործս առաքելոց պատմած զէպղերի կրկնութիւնը կը կատարուի 'ի Հայս այս միջոցին: Տէրունական տեսլեամբ Ս. Թաղէոս կ'առաջնորդուի 'ի բանտն ուր Սանդուխտ եւ բազում հաւատացեալք պահուած էին, եւ կը քաջալերէ ու կը մխիթարէ զնոսա: Բանտապանք կը զարհուրին երբ բանտի դռները բայ կը տնտնեն, եւ զսուրբ առաքեալն լուսափայլ տեսլեամբ 'ի մէջ բանտարկելոց կը դտնեն: Կը մօտենան, եւ Ս. Թաղէոսի խօսքերը լսելէն յետոյ կը հաւատան 'ի Քրիստոս, եւ իւրեանց բուր ընտանեօք հանգերձ կը մկրտուին 'ի նմին գիշերի թուով երեսուն եւ երեք այր եւ կին:

Ինչպէս զկնի մկրտութեան Տեառն քառասորեայ փորձութիւնն յաջորդեց, նոյնպէս եւ այս նորահաւատ քրիստոնեայք յետ մկրտութեան ծանր փորձութեան ենթարկուեցան: Չարին զրգմամբ այն զօրաւոր հարցումն կը ներկայանար. « Զի՞նչ պակաս էր ձեզ զի թողէք զմեծ աստուածն Անահիտ, եւ զմայր աստուածոցն Պիսիդովն, եւ զուք մոլորեցարուք զհետ առն միոյ հրէի, որ ուսոյց ձեզ նոր ուսումն, եւ խաբեալ զմիտս ձեր կորոյս: » Սակայն Ս. Առաքելոյն քաջալերութիւնն զօրացոյց զնոսա, որով արիւթեամբ դիմադրեցին բոլոր փորձութեանց:

Բանտապանաց բարի բախտին հանդիպեցան Սանատրկոյ պատգամաւորք, որ զնացած էին զՍանդուխտ յարքունիս տանելու. նոքա եւս հաւատաւով 'ի Քրիստոս՝ յաւելան 'ի թիւս հաւատացելոց, որով առաւել եւս զայրացաւ Սանատրուկ եւ հրամայեաց սպանանել քրիստոնեայ բանտարկեալներէն երկու հարիւր հոգի: Մի եւ նոյն ժամանակ Ս. Սանդուխտ իւր սեռին յատուկ փափկարտութեամբ « մխիթարէր զամենայն հաւատացեալսն, կերակրէր զնոսա հացիւ եւ զգեցուցաներ հանգերձիւ », հիւանդները կը խնամէր եւ մարտիրոսաց մարմինները քրիստոնէարար թաղելու կ'օգնէր, իւր բանտակից հաւատացեալ եղբարց առաքելաբար յորգոր ու խրախոյս կը կարգայր. « Եղբարք իմ, կ'ասէր, պի՞նդ կացէք եւ զօրացարուք 'ի Քրիստոս, զի ոչինչ են սպառնալիք երկրաւոր թագաւորացս. յայն միայն հայեցարուք, յոր հաւատացէքն՝ յերկնաւոր թագաւորն: » Ի վերջոյ թագաւորը կը հրամայէ զԱռաքեալն եւ զՍանդուխտ եւ զայլ կալանաւորսն իւր ներկայութեան բերել. եւ ամենէն աւելի կ'աշխատի իւր

զուսարն փրկել եւ քրիստոնէութիւնն ուրանալ տալ նմա : Այլ Սանդիստոյ անյողգողզ պատասխան՝ թէ « նա է Աստուած որ արար զամենայն յոչնչէ, եւ հաստատեաց զամենայն բանիւ բերանով իւրով, » առաւել եւս կըզայրացուցանէ զՍանատրուկ, որ կըհրամայէ կապել զնա եւ տանջանաց ենթարկել. բայց զրեթէ հրաշիւք իմն Սանդուխտ կ'ազատուի եւ կըփախչի, եւ առժամապէս իւր հօրն եւս մեծ ահ կընեղնչէ, որ նորա ետեւէն մի իշխան զրկելով՝ մտերմութեան եւ սիրոյ պատգամ կըզրկէ իւր դստերն : Պատգամաւորն իւր պաշտօնը կատարելու միջոցին այնքան կըզգածուի Ս. Առաքելոյն եւ Սանդիստոյ խօսքերէն, որ կըհաւատայ ամենայն տամբ եւ մկրտուելով՝ Սամուէլ կըկոչուի, եւ միանգամայն ինքզինքն կընուիրէ յաշակերտութիւն Ս. Առաքելոյն : Պատմագիրն այս իշխանի դարձին մեծ նշանակութիւն կըտայ, « զի ոչ գտանէր նման նորա 'ի մէջ աշխարհիս Հայոց : » Թագաւորն եւս հասկանալով այս դարձի վնասակարութիւնն հեթանոսական կրօնի համար, եւ նպաստաւորութիւնն քրիստոնէութեան համար, անմիջապէս « տայր վարել բեւեռս հրացեալ ընդ ուսս նորա, եւ այնպէս կատարեցաւ : »

Ս. Սանդուխտ անխոնջ աշխատութեամբ Աւետարանի տարածման համար կըզործէր, ոչինչ համարելով այն բազմադիմի դժուարութիւններն որով ամեն կողմէ շըրջապատեալ էր. աներկիւզ « քարոզէր զբանն կենաց, եւ դարձուցանէր զբաղունս, առնելով նշանս եւ սքանչելիս : » Նորա ջանից չնորհիւ թագաւորի մերձաւոր ելող եւ Սանատրկոյ արքունեաց մէջ մեծ դիրք ու անուն վայելող՝ Զարմանդուխտ յիկինն ամենայն տամբ իւրով հաւատաց 'ի Քրիստոս, եւ Ս. Թաղէոսի ձեռօք մկրտուեցան երկու հարիւր ոգիք : Երբ թագաւորն իմացաւ, զԶարմանդուխտ սպանել տուաւ, եւ մնացեալներն այլեւայլ կերպիւ հալածանաց եւ չարչարանաց ենթարկեց. բայց ամենէն աւելի կը սաստկանայր իւր զայրոյթն իւր երբեմն սիրեցեալ դստեր Սանդիստոյ վերայ, եւ « մրմուռալ իբրեւ զառիւծ 'ի վերայ դստերն՝ ասէր. նա զամենեսեան առաւել մոլորեցուցանէ : » Ի վերջոյ նորա մահուան վրձիռն կ'արձակէ. բայց դահձք կը դժուարանան արքայի դստեր վերայ ձեռք դնել, մինչեւ « պատանի ոմն եհար զկուրծս երանելոյն եւ աւանդեաց զողին 'ի Քրիստոս քարի խոստովանութեամբ 'ի Հայր եւ յՈրդի եւ 'ի Հոգին

սուրբ : »

5. Նահատակութիւն Մրցյն Թաղեոսի .

Ձկնի վկայութեան սուրբ կուսին Սանդխտոյ, կը պատմուի թէ երկու հազար անձինք եւս դարձան 'ի հաւատս Գրիստոսի եւ մկրտեցան, որով կ'երեւի Ս. Սանդխտոյ արիութիւնն եւ Ս. Թաղեոսի քարոզութիւնն մեծապէս ներգործած էին Արտազու բնակչաց վերայ, եւ սուրբ կուսին նահատակութիւնն զօրաւոր խթան եղած էր՝ յերեւան բերելու ինչ որ յամաց հետէ 'ի Թաղստեան էր, — գեղեցիկ օրինակ այն առածին թէ « Արիւն մարտիրոսաց սերմն եկեղեցւոյ : »

Կը պատմուի թէ Ս. Թաղեոս Հայոց ուրիշ գաւառներն եւս գնաց քարոզութեան, նոյնպէս եւ 'ի կողմանս Աղուանից, եւ անտի մտաւ 'ի Կապադովկիա ուր բազում ուրեք քարոզելով, մասնաւորապէս Կեսարիոյ մէջ եկեղեցի հաստատեց, որոյ վերայ զԹէոփիլէս ոմն եպիսկոպոս ձեռնադրեց : Հայ պատմիչք զայս աւանդութիւնն, որ եւ 'ի յունաց ընկալեալ է, մասնաւոր կերպիւ կը շեշտեն, որովհետեւ մեր եկեղեցւոյ յետագայ պատմութեան մէջ մեծ կարեւորութիւն ունեցած է Կեսարիոյ եկեղեցին, ուստի ընկալաւ զձեռնադրութիւնն եպիսկոպոսութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ : Երբ պարագայից բերմամբ հարկ տեսնուեցաւ հայոց առաքելական յաջորդութիւնն նորոգելու, զՍ. Գրիգոր Կեսարիա զրկելու պատճառներէն մինն եւս, որպէս պիտի տեսնեմք յիւրում տեղւոջ, այս էր, որ 'ի Ս. Թաղեոսէ հաստատեալ մերձակայ եկեղեցին դիմելով՝ Հայաստանեայց եկեղեցին սոսկապէս կը նորոգէր Ս. Թաղեոսի յաջորդութիւն 'ի Հայս, առանց որ եւ է կերպիւ ինքզինքն մի օտար եկեղեցւոյ իրաւասութեան ներքոյ ենթարկելու, որով կը հաստատէր Կեսարիոյ ձերուսի հայրապետի Ս. Դեոնիսիոս խօսքն առ Ս. Գրիգոր Լուսաւորիչ թէ՛ « Դու ընտրեցար 'ի տեղի ընտրելոց սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի եւ Թաղեոսի : »

Կարի դժուարին է ճիշդ թուականներով որոշել իւրաքանչիւր դիպաց ժամանակ, քանի որ մեր ձեռքն հասած վկայաբանութիւնք եւ աւանդութիւնք պատմագրութեանն ոչ այն նպատակն եւ ոչ այն եղանակն ունին որ ներկայ դարու մէջ կը պահանջուի : Երեւի այս ուղեւորութիւնն

տեղի ունեցաւ զկնի առաջին այցելութեան Ս. Թաղէոսի Շաւարչան քաղաքի, երբ Սանատրկոյ կողմէ լաւ քնդունելութիւն գտաւ եւ երբ եկեղեցին Արտազ գաւառին մէջ յաջող դրութեան մէջ կըթուէր լինել: Հաւանօրէն այս միջոցին Ս. Թաղէոս ուրիշ երկիրներ եւ գաւառներ եւս այցելեց եւ եկեղեցիս հաստատեց, զոր ժամանակ առ ժամանակ կրկին կ'այցելէր նման Ս. Պաւղոսի. եւ հաւանօրէն Ս. Առաքելոյն այս միջանկեալ բացակայութեան շնորհիւ Արտազէն՝ նորա նահատակութիւնն (այնքան յետաձգուեցաւ: Բայց երբ Աբգար մեռաւ եւ Սանատրուկ եւ Անանէ իւրեանց ընկալեալ սուրբ կրօնն ուրացան եւ զքրիստոնէութիւնն հալածել սկսան յամի 36, Ս. Թաղէոս վերադարձաւ այցելելու այն եկեղեցիներ զոր միանգամ հաստատած էր: Այս ուղեւորութիւն երեւի մի քանի տարի տեւեց, եւ ճանապարհին պատահեցաւ Ոսկեանց զէպօր որ պիտի պատմուի 'ի կարգի պատմութեան, եւ հուսկ յետոյ Շաւարչան հասաւ ուր նահատակեցաւ Սանատրկոյ հրամանաւ յամի 43:

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն

Խորին շնորհակալութիւն կրչայնեմք ներկայիս այն բոլոր սզգային քերթերուն եւ հանդէսներուն, որք հանեցան **ԵՎԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵՍՅՅ** կրօնաքերթի հրատարակութիւն ծանուցանելով՝ փառաւրեակս խօսքերով եւ օգտակար դիտողութեանք զնեզ խրատութեւ: Այս առիտ եղած ակնարկութիւնք կրօնաքերթի ուղղութեան մասին՝ ուշադրութեանք եւ հաշտութեանք կարգացած եմք, եւ պիտի աշխատիմք շատ կարի օգտուի մեր արդոյ պաշտօնակցաց բարեկամական դիտողութիւններէն, որպէս զի կարեւար էս առաւել օգտակար հանդիսանալ ղնքերցողաց մերոց ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Սուրբ եկեղեցոյ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

[Սոյն վերնագրի ներքոյ դրուած փոքրիկ յօդուածներն նպատակ ունին քրիստոսի վարուց վերայ մի կարգ պարզ դասերի ծրագիրներ ներկայացնել յորոցմէ կրօնուսոյցք կարեն օգտուիլ, աւելցնելով քերեւս ուրիշ ինչ որ իւրաքանչիւր պարազային յարմար երեւի : Ոչ ինչ նուազ օգտակար կարեն լինել նաև քարոզչաց, որք իբրև նախապատրաստութիւն սոյն կամ սոյնպիսի ծրագրաց վերայ քերեւս յօժարին իւրեանց քարոզներ դասաւորել :]

ԴԱԼՈՒՍ Տ ՔՐԻՍՏՈՍԻ

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնաւոր ծնունդն աստուածաշին տնօրէնութեան մէկ մասն էր : Այն հարցը թէ արդեօք Քրիստոս յաշխարհ պիտի գա՞ր եթէ մարդ մեղանշած չը լինէր՝ յոյժ դժուար է և պէտք է ընդ միշտ անպատասխան մնայ : Բայց և այնպէս Ս. Գրոց մէջէն ազնարկութիւններ չեն պակասեր, յորոց կ'երևի որ եթէ մարդ իւր նախկին անմեղութեան մէջ մնացած լինէր՝ դարձեալ մի փրկչի կարօտ էր, դարձեալ Որդին Աստուծոյ պիտի աշխարհ գտար որպէս զի կապ ու միջնորդ դառնար 'ի մէջ Աստուծոյ և մարդկան, և զնա յայտնէր մեզ. որ պարագային, հարկաւ, խոշի մահուան չպիտի դատապարտուէր :

Այլ յորժամ մարդ անկաւ այն փառաւոր վիճակէն յորում դրած էր զնա Աստուած, հարկ եղաւ որ Որդին Աստուծոյ մարդանար, որպէս զի հաշտութեան մէկ միջոց բացուէր :

Այս այսպէս լինելով, Փրկչի կամ Մեսիայի գալուստն կանխատեսեալ էր : Նոյն իսկ Ադամայ պատուիրանազանցութենէն անմիջապէս յետոյ Աստուած դրաւ թշնամութիւն 'ի մէջ օձին և 'ի մէջ կնոջն, “ 'ի մէջ զաւակի քո և 'ի մէջ զաւակի դորա, ” որ պիտի սպասէր կամ խորտակէր օձի, այսինքն, սատանայի դուռին, ըստ Եննդ. Գ. 15 :

Մեսիայի գալուստն Աստուծոյ ընտրեալ ժողովրդեան, այսինքն Հրէից, կրօնական արարողութեանց մէջ անդադար կը յայտնուէր :

1. Նոցա ծէսերն, 2. Նոցա զոհերն, նախատիպ օրինակներ էին Մեսիայի գալուստեան.

3. Նոցա մարգարէք յաճախ կը դուշակէին զայն :

1. Հրէից կրօնական ծէսեր նախատիպ օրինակներ էին Մեսիայի գալուստեան : Մէկն յիշէնք. այն է՝ քաւութեան մեծ օրն յորում քահանայապետն մի այծ՝ Աստուծոյ խորանի առջև ներկայացնելէն յետոյ կ'արձակէր յանապատ, զոր տես Ղևտ. Ժ2.

1 Այժը կը ներկայանայ առաջի Աստուծոյ 'ի քաւութիւն մեղաց և 'ի հաշտութիւն ժողովրդեանն ընդ Աստուծոյ :

2 Յետ այնու կ'արձակուէր յանապատ՝ իբր թէ ժողովրդեան մեղքերն իւր վերայ առնելով 'ի բաց տանելով. “ եւ առցէ նորազն յինքն զանօրէնութիւնս նոցա : ”

2. Նոցա զոհերը նախատիպ օրինակներ էին: Յիշենք

- 1 Յեղուսն արեան,
- 2 Կատարելութիւն զոհի, և
- 3 Զոհումն հանապազօրեայ:

Զոհերն երեք տեսակ էին. (1) վասն քաւութեան, (2) ողջակէզ, (3) վասն հաշտութեան:

Պետք է գիտնանք որ Մեսիային ակնարկող զոհեր կը մատուցուէին պատմութեան հնագոյն դարերէ 'ի վեր: Ս. Գրոց մէջ յիշուած, արտաքոյ Ղևտական օրինաց, զոհ մատուցին (ա) Հաբէլ, Ծննդ. Դ 4. (բ) Նոյ, Ծննդ. Ը 20. (գ) Աբրահամ, (դ) Դաւիթ, ԲԹազ. Զ 13. (ե) Մանասէ Բ Սնց. Լ Գ 16:

Երբ Տէրն մեր Յիսուս եկաւ, զոհերն այլ ևս դադրեցան, վասնզի «ստուերն 'ի լոյս ճշմարտեցաւ:» Գրիստոս ինքն եղաւ ճշմարիտ և իրական զոհն, «քանզի զատիկ մեր զենաւ քրիստոս:»

3. Մարգարէք գուշակեցին զայն: Եսայի մարգարէ կը կոչուի Աւետարանական Մարգարէ, որովհետեւ այնքան մարգարէացած է Մեսիայի գալուտեան մասին: Նա ներշնչմամբ տեսաւ.

- (1) Գրիստոսի առաջին որպէս և միւսանգամ գալուտան թ 1-7.
- (2) Նորա շարճարանքն ու խոնարհութիւնն Ես. Ծ Գ.
- (3) Աւետարանի տարածումն որ կը տանի իւր հետ ուրախութիւն և խղաղութիւն Ես. ԾԵ 12
- (4) Հանդերձեալ փառք փրկելոց Ես. ԼԵ 9

Մարգարէն Մազաբիա նաև կը խօսի Մեսիայի գալուտեան և նորա նախընթաց կարապետի մասին Մաղ. Գ 1-3: Ովսէէ մարգարէն տեսլեամբ իմացաւ և քարոզեց Մեսիայի գալուտան և նորա փախուստն յԵգիպտոս. Ովսէէ ժԱ 1: Ոչ թէ միայն քրիստոսի ծննդեան պարագաներն, այլ նաև նորա ծննդավայրն որոշակի յիշուած է. Միքիէ Ե 2:

Հետևաբար ժողովուրդը պատրաստուած էր Մեսիայի գալուտեան համար, և ճիշդ նորա ծննդեան միջոցներին անձկութեամբ կըսպասէր նմա: Սիմէոն ծերունին, օրինակի համար, “հրաման տուեալ էր 'ի Տեառնէ մի' տեսանել զմահ, մինչև տեսցէ զԹծեալն Տեառն:” Մտածենք թէ 1. ինչքան մեծ խնամքով ամեն ինչ նախապատրաստուած էր աստուածային վերատեսչութեամբ:

2. Ինչքան ճիշդ է Աստուծոյ խոստումն գալիք իրաց ժամանակի և կատարման եղանակի նկատմամբ:

3. Ինչպէս քրիստոս եկաւ 'ի լրումն ժամանակի, երբ ամեն ինչ պատրաստ էր:

4. Ինչքան կարեւոր լինելու է ուրեմն քրիստոսի գալուտան, քանի որ մարդոց միաքիւր այսքան խնամքով պատրաստուած էին սու այդ: Մարգարէութիւնք ընդհանրապէս, հարկաւ, քրիստոսի կ'ակնարկեն,

ինչպէս Զատիկի տօնն, երբ դառին արիւնը կը սրսկուէր տանց սեմոց և բարաւորի վերայ: Բայց նորա գալուստն էր որում կ'ակնկալէին մարդիկ մեծ անձկանօք: Սակայն այդ ակնկալութիւնը հրէից կողմէ սխալ հիման վերայ հաստատուած էր. քանզի նոքա կրտսերներն դալատեան մի փրկչի որ կը կարծուէր թէ պիտի պարգևէ իսրայելեան տոհմին երկրաւոր և ժամանակաւոր բարիքներ և յաջողութիւն, և պիտի ազատէ իւրեանց ազգն օտարազգեաց (հռովմայեցւոց) լուծէն:

Իսկ մեք քրիստոնեայքս, ընդ հակառակն, յետս կը հայիմք, և մեր խորհրդոց զօրութիւնն ու արգիւնքն փրիստոսի սուրբ խաչէն կ'առնումք, և մեր եկեղեցւոյ Ս. Պատարագն՝ ՚ի վերայ խաչին մատուցեալ փրիստոսի պատարագէն կըստանայ իւր ազգեցութիւն:

ԽՐԱՏԱԿԱՆ. Կ'ուսանիմք (1) Աստուծոյ անհուն բարութիւնը որով մեզ մի փրկիչ շնորհած է.

(2) Յիսուսի փրիստոսի փրկաբոժութեան պէտքն.

(3) Աստուծոյ գործելու կարգն ու եղանակն.

(4) Լաւ բժուենել մեր փրկչի տնօրէնութեանց աննման և անասման արժէքն:

Ո . ՔԶ . Ղ .

ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂԱՅ (*)

Ն Ա Խ Ա Ն Ձ

Մահացու մեղաց երկրորդն ըստ կարգին՝ է Նախանձ: « Այլ եւ մեղայ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք, հպարտութեամբ եւ մասամբք նորին, նախանձու եւ մասամբք նորին եւ այլն: »

Նախանձն է այն ցաւն կամ տրտմութիւնն զոր մի մարդ կըզգայ իւր ընկերոջ բարեբախտութեան վերայ:

Նախանձ բառն լաւ նշանակութիւն եւս ունի. այն ինչ որ սրբազան առաքեալը կ'ասէ « Նախանձաւոր լերուք բարեաց », կամ այն որ Սաղմոսերգուն կ'ասէ « Նախանձ տան քո կերիցէ զիս »: Բարի նախանձն այն է որ երբ

(*) Ներկայ տարւոյս Մեծի Պահոց կերակի աւուրց մէջ Մանչէսթրի Հայոց եկեղեցւոյ մէջ մի կարգ քարոզներ խօսուեցան եօթն մահացու մեղաց վերայ, որոց երկրորդի համառօտութիւնն է այս:

մեր ընկերոջ բախտաւորութիւնը տեսնենք, մենք եւս աշխատութիւնը նոյն եւ կամ առաւել մեծ բախտի արժանանալ առանց մեր ընկերին դէմ ցաւ զգալու կամ գաղտնի ատելութիւն կրելու: Աշխարհի յառաջադիմութեան գլխաւոր շարժառիթն է եւ միշտ լինելու է բարի նախանձն, որ ամեն լուսաւորեալ ազգի մէջ կրտսնաւորի գիտութեանց, արհեստից եւ առեւտուրի մէջ: Նախանձն ապօրինի թշնամական եւ անձնակործան կերպարանք կ'առնու, երբ մի մարդ իւր անձին շահէն բոլորովին զատ՝ իւր աւելի յաջող եւ երջանիկ ընկերի մնասն ու կորուստն եւ ապերջանկութիւնը կը ցանկայ: Նորա թշուառութիւն իւր սրտի մխիթարութիւնը կը համարի. արիւտութիւնը չունի ինքնին բարձրանալու եւ իւր ընկերին արժանեօք եւ արդեամբ գերազանցելու, այլ կը փափագի զայն տեսնել իւր գետնաքար լիճակին մէջ, եւ ամեն անարգ միջոց 'ի գործ կը դնէ զայն ստորնացնելու, ապերջանիկ առնելու:

Նախանձն հպարտութեան ծնունդն է եւ բարկութեան քոյրն է եւ ծուլութեան սրտակիցն: Հպարտութեան թոյնն է որ չի հանդուրժեր ընկերի յաջողութիւն, հանճար եւ այլ առաւելութիւնք. բարկութեան զրդումն է որ բարեբախտ ընկերին մնաս ու կորուստ եւ այլ ամենայն չարիք կը խորհի կը բորբոքէ. ծուլութեան ստորաքարը սրտակցութիւնն է որ չի ներեր անձնական ջանիւք եւ անդուլ աշխատութեամբ յառաջադիմել, յաջողիլ եւ ընկերոջ բարի բախտին արժանանալ, եւ եթէ հնար է զայն եւս գերազանցել իսկ առանց նմա վատութեամբ վնասելու:

Նախանձն նման այլ ամենայն մեղաց՝ խորհրդով բանիւ եւ գործով յերեւան կը գայ: Նախանձոտն իւր սրտին մէջ ատելութիւն կը անուցանէ ընդդէմ ընկերին, անիրաւութիւն եւ զաւաճանութիւն կը խորհի, ընկերի պատահական կորուստն կամ անկումն կամ մի որեւէ դժբաղտութիւն՝ նախանձոտի սրտին ուրախութիւն կը պատճառէ. իսկ նորա բարձրանալն ու փառաւորութիւն, նորա յաջողութեան ու յառաջադիմումն նախանձոտին ցաւ ու վիշտ կը պատճառէ: Նախանձոտը չկարէ հանդուրժել իւր ընկերոջ արժանաւոր գովեստից, եւ ամեն ջանք ու հնարք 'ի գործ կը դնէ ուղղակի կամ անուղղակի այդ գովեստներն մեղմացնելու եւ նսեմացնելու, կամ վատարանութեամբ նորա պատիւը կոտորելու. «Այնքան ալ գովեստի արժանի չէ,» ասելով, կամ, «Անոր գէշ կողմերը

չըգիտէք, » «Այդ միայն արտաքինն է» եւայլ այսպիսի խօսքերով: Նախանձոտն ոչ սակաւ անգամ իւր ատելութիւն կըծածկէ լուութեան ներքոյ, եւ չի ուզեր խոստովանել ինչ որ չէ կարող ուրանալ. երբ կըտեսնէ ու կըլսէ որ իւր ընկերն կըզրպարտուի եւ կըդատապարտուի յանիրաւի, ճշմարտութիւնը գիտնալով հանդերձ՝ կըլուէ, եւ զանմեղն մէկ արդար ու ճշմարիտ խօսքով իսկ պաշտպանելու արիութիւնը չունի: Այո՛, եւ շատ անգամ լուութիւնէ եւս անցնելով՝ առերեւութին գովեստի խօսքերով կըծածկէ իւր թունալից նպատակ. «Աղէկ մարդ է, բան մը չունիմ անոր դէմ. ուրիշներ ասանկ կամ անանկ կըսեն»:

Տէրն մեր Յիսուս յարմարաբար կըպատկերացնէ դժոխոց մէջ տիրող նախանձն՝ ասելով «ուր որդն ոչ մեռանի եւ հուրն ոչ շիջանի,» ուր եղիցի «լալ եւ կըծտել ատամանց:» Այո, բնակիչք դժոխոց իւրեանց ատամները կըկրճտեն, վասն զի ինքեանք երկնից արքայութեան երջանկութիւնը կորուսած են, եւ կընախանձին որ այլք, թերեւս իւրեանց նախկին խոնարհագոյն ընկերներ, ժառանգած են: Ո՛չ ապաքէն մեր Փրկչի նկարեալ դժոխոց պատկերն այսօր իսկ առաւել կամ նուազ սաստկութեամբ կըտեսնուի նախանձոտ մարդու սրտին մէջ, ուր չարութեան եւ ատելութեան «որդն ոչ մեռանի եւ հուրն ոչ շիջանի.» որ նախանձու խարաղանոյն կըտուայտի, գիշեր ցերեկ կըտառապի ինքնահնար տանջանարանօք ոչինչ նուազ ողորմագին քան զլալն եւ կըրճտել ատամանցն տէրունակոտն բանին: Արդ տեսնելով նախանձու սոսկալի բնաւորութիւն, պարտիմք ամենայն զգուշութեամբ հեռի մնալ ՚ի նմանէ, մտաբերելով որ ՚ի պատկեր Աստուծոյ ստեղծուած եմք, եւ այդ մեղօքն զմեզ Աստուծոյ բնութեանէն եւ աստուածային կենաց հաղորդակցութիւնէ կ'անջատեմք եւ կըզրկեմք:

Նախանձն սատանայական է, վասն զի, ինչպէս Սողոմոն ասած է, «Նախանձու բանապրկուին (այսիքն, սատանայի) եմուտ մահ յաշխարհ:»

Նախանձն սպանութիւն եւ սպանութեան խորհուրդներ կըզրգէ մարդոյ սրտին մէջ: Չէ՞ որ Կային իւր Հաբէլ եղբայրը սպանեց առ ՚ի նախանձու որ իւր եղբօրպատարազն ընդունելի եղաւ առաջի Աստուծոյ եւ իւրն մերժուեցաւ: Չէ՞ որ Նաւ կըխորհէր իւր Յակովբ եղբայրը սպանանել որովհետեւ նա իւրմէն աւելի խոհեմ գտնուած էր, եւ

Աստուծոյ առատ օրհնութեանց եւ շնորհաց արժանացած էր: Չէ՞ որ Յովսեփայ եղբայրներ կ'ատէին զինքն, եւ երբ առիթը գտան սկիզբն սպանանել կըխորհէին, ապա գուրը ձգեցին, եւ հուսկ յետոյ վաճառեցին իսմայէլացի վաճառականաց: Ինչու՞: Որովհետեւ իւրեանց ծերունի հօր ամենէն սիրական զաւակն էր, եւ որովհետեւ Աստուծոյ նախախնամութեամբ Յովսէփ ընտրուած էր շատ աւելի մեծ փառաց քան զոր կըվայելէին իւր եղբայրներ Իսրայելի խոնարհ յարկի ներքոյ:

Նախանձն էր որ զՍաւուղ թագաւոր անդադար կըդրէր իւր հաւատարիմ ծառայ Դաւթի կենաց դէմ. վասն զի Դաւիթ հաճելի էր Աստուծոյ, եւ ուղղութեամբ եւ արդարութեամբ կըվարուէր յամենայն ժամ, եւ 'ի փոխարէն' Աստուծոյ ամենառատ օրհնութիւն կըվայելէր, արտաքոյ կարգի քաջութիւն եւ մարմնաւոր զօրութիւն ցոյց տուած էր պատերազմաց մէջ, եւ ժողովրդեան սէր ու համակրանք հահած էր:

Հրէից ազգի մեծամեծներն զՔրիստոս մահուան գատապարտեցին ոչ այլ ինչ բանի համար քայց եթէ առ նախանձու: Կընախանձէին որ այդ խոնարհ եւ աղքատ գալիւեացիին այնպիսի հրաշալի նշաններով եւ հրապուրիչ խօսքերով հազարաւոր մարդիկ կըբաշէր իւր ետեւէն, եւ այնպիսի փառք եւ բարի համբաւ կըստանար շատարակ ժողովրդեան մէջ զոր ոչ ոք մինչ ցայն վայր որեկնց տուած էր:

Կարելի է 'ի Ս. Գրոց դեռ հարիւրաւոր օրինակներ յայաջ բերել՝ ցոյց տալու համար նախանձու չար աղբիւրն եւ եղկելի արդիւնքն:

Ոչինչ մեղք այնքան վնասաբեր է մարդոյ անձին իսկ եւ առողջութեան որքան նախանձն. ոչինչ մեղք այնքան խորզ եւ յայ տնի կերպիւ պատիժը իւր հետ կը կրէ որքան այս մին: Երեւակայեցէք այն ցաւն եւ վիշտն եւ մտատանջութիւնն, այն ներքին հոգեմաշ կըտատուին զոր նախանձոտ մարդը կըզգայ առանց որեւէ մի շահ ունենալու, առանց որ եւ է մի հաճոյք զգալու. այլ հետըհհետէ եւ օր ըստ օրէ կըծանրանան այդ ցաւեր առանց որ եւ է մի գոհունակութիւն բերելու նախանձոտին: Նախնիք զնախանձն պատկերացուցած են մի պառաւ, դալկահար եւ վէրքերով լի կնոջ, տխուր եւ ընկղմեալ աչօք, որոյ սնունդն է օձի միս եւ իւր իսկ սիրտն, զոր ժամանակ առ

ժամանակ ազահարար կըկրծէ, կազալով եւ գողգողելով կըքալէ՝ մի փշալից փայտի վերայ կրթնելով որ ձեռքերը կըպատառէ կըլիբաւորէ :

Նախանձն կընմանի մի տեսակ որդի որ փայտի մէջ կըգոյանայ եւ փայտն ուտելով՝ զայն հետզհետէ կըլծացնէ կ'ապականէ. կամ ժանդի որ երկաթէն գոյանալով կամաց կամաց երկաթը կ'ուտէ կ'ոչնչացնէ :

Նախանձու այս թունաւոր անձնասպան եւ ազգակործան վտանգէն ազատուելու համար պարտիմք հանապազ աղօթել որ բարեբարն Աստուած շնորհէ մեզ եղբայրական սէր եւ բարեգթութիւն, որ չըխորհիմք, չըխօսիմք եւ չըզործեմք ինչ որ սիրոյ օրինաց հակառակ է. ատեմք աշխարհային այն յաջողութիւնն, լինի նա հարստութիւն, փառք եւ մեծութիւն կամ այլ իմն առաւելութիւն, որոյ պատճառաւ նախանձու չար մոլութեան անձնատուր լինելու փորձուիմք : Լաւ է աղքատ, խոնարհ եւ խեղճ մնալ՝ ուղիղ եւ անգորր մտօք, քան թէ մեծութեամբ ու ճոխութեան յուսով մտամաշ լինիլ եւ եղբայրատեաց գտնուիլ : Աղօթեմք որ ամենակարող Արարիչն մեր պարգեւեսցէ մեզ խոնարհութեան եւ ներողամտութեան մեծ առաքինութիւնն, նաեւ քաջութիւն եւ արիութիւն որ նոյն իսկ մեր նախանձորդաց դէմ սէր եւ խոնարհութիւն ցոյց տամք, որպէս Տէրն մեր իւր երկրաւոր տնօրինութեանց միջոցին այնքան յաճախ ցոյց տուաւ, եւ մինչեւ իսկ 'ի վերայ մահաբեր իաջին՝ իւր նախանձորդաց համար կըբարեխօսէր. « Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն : » Որում թողութեան շնորհաց եւ զմեզ զամենեսին զհաւատացեալս անուան իւրոյ արժանի արասցէ. Ամէն :

ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ՄԱՐԿՈՍԻ ԱԻՐԵԼԻՈՍԻ (*)

ՀԱՒԱՔԵԱՅ ԱՐԺ • ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Կ • ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գէշ բան է չգիտնալ ինչ որ պարտական է մարդս գիտնալու . բայց շատ աւելի դէշ է գիտնալ, ու անասունի պէս ապրիլ :

Չկայ այնպէս բարձր լեռ մը, եւ ոչ անանկ խորունկ ծով մը, որ մարդը չկրնայ չափել . բայց մարդու սրտին խորունկը կարելի չէ քննել ու չափել :

Ընդհանուր կանոն է, որ անզբաղ մարդիկ միայն կըրնան պահել իրենց գիտութիւնը :

Գիտութիւն ուրիշ բանի չի պիտի ծառայէ, բայց մարդու վարքն ուղղելու եւ լեզուն զսպելու համար :

(*) Մարկոս Աւրելիոս, որ Հռովմայ կայսր էր Բրիտոսի թուականին 161էն մինչեւ 180, հռովմէական կայսերաց մէջ, կամ լաւ եւս, իւր ժամանակակից ամբողջ հեթանոս աշխարհի մէջ, ամենէն ազնիւ սիրտ ունեցողներէն էր . շատ անուանի էր իւր իմաստուն կառավարութեամբն, ուսմանց եւ գիտութեանց համար ցոյց տուած սիրոյն, եւ ծնողաց ու դաստիարակաց ցոյց տուած յարգանաց համար : Ի մանկութենէ ինքզինքն ստոյիկեան փիլիսոփայութեան նուիրած լինելով՝ ամենայն եռանդով կ'աշխատէր առաքինի, արդար եւ ժողովալ կեանք վարել : Իւր ազատ ժամերն կ'անցնէր անընդհատ ընթերցմամբ իմաստասիրական եւ բարոյական մատենից, եւ աղօթիւք եւ խորհրդածութեամբ : Բայց դժբախտաբար այս մեծն եւ ամենէն ազնիւն 'ի մէջ հեթանոսաց՝ քրիստոնէական կրօնի վնասակարգոյն հակառակորդներէն մին հանդիսացաւ : Քրիստոնէից անտարբերութիւնն ներկայ կենաց մասին, եւ այն արհամարհանքն, որով նախկին հաւատացեալք կընկատէին հալածանքն եւ մահն որոց կ'ենթակուէին 'ի հեթանոս բռնակալաց, Մարկոս Աւրելիոսի զայրոյթն կըյարուցանէին : Վասն զի, ըստ ստոյիկեան իմաստասիրաց, մարդոյս անհրաժեշտ պարտքն է՝ խնամել եւ ըստ կարի անկորուստ եւ առողջ պահել՝ 'ի բնութենէ մեզ պարգեւեալ կեանքն մինչեւ ցտհմանեալ ժամանակ յօրինաց ընթեան : Ուստի քրիստոնէից բռնած ընթացքն իբրեւ մոլեռանդութիւն եւ տէրութեան օրինաց դէմ հակառակութիւն կըլծուէր նմա :

Ապուլինոսէն հարցուցին՝ թէ աշխարհքիս մէջ ամենէն աւելի հարուստն ո՞վ է, նա ըսաւ՝ ա՛յն՝ որ ամենէն աւելի գիտէ : զարձեակ իրմէն հարցուցին, թէ ամենէն աւելի աղքատն ո՞վ է, նա պատասխանեց, թէ ա՛յն՝ որ ամենէն աւելի յիմար է : Իմաստունը երբ զանազան փորձանքներու մէջ սա՛նի, զինքը ամուր կը բռնէ, որ չ'իյնայ, բայց տգէտը՝ ամենափոքր զխպուած ի մը պատահած առեն՝ առանց սահելու ալ կ'իյնայ :

Թեբէացի փիլիսոփայ մը ցոյց կուտար մարդոց իր վրայի եղած բոլոր հազուձմաներն ու քովը գտնուած գրեանքն եւ անլ բաները՝ որոնք իրեն ձեռագործներն էին . տեսնողներն երբ զարմանալով կըսէին թէ ինչպէս կրնայ մէկ մարդ այսքան արհեստներ սորվիլ, նա պատասխանեց, թէ որ մարդոց ծուլութիւնն արգելք չըլլար, կրնար մէկ մարդ սորվիլ մարդոց մէջ գտնուած բոլոր արհեստները :

Յիմարներն իմաստուններուն մէջ կը ծածկուին, ու իմաստուններն ալ յիմարներուն մէջ կը փայլին :

Պիւթագորաս իր դրան վրայ գրած էր . « Ով որ գիտնալու բաները չգիտեր, անասուն է մարդոց մէջ . եւ ով որ պէտք եղածէն աւելի չըգիտեր, մարդ է անասնոց մէջ . իսկ ով որ կարելի եղածները բոլորն ալ գիտէ, աստուած է մարդոց մէջ : »

Երբեմն կ'ըլլայ, որ ուշիմ ու խելացի տղաները խելագար ծեր կը դառնան, ու խենդ տղաներն ալ՝ խոհեմ ու

Սակայն Աւրելիոսի ամբողջ կեանք եւ նորա իմաստասիրական եւ բարոյական գրուածներն ցոյց կը տան, որ ինչ որ գործեց՝ խղճի մտօք իբրեւ արդարութիւն եւ ուղղութիւն գործեց, ինչպէս սոյն խրատական խօսքեր եւ նորա իմաստութեան եւ ուղղամտութեան յայտնի ապացոյց են : Բայց ամենէն զարմանալին այն է որ նորա կեանք որպէս եւ նորա դրաւոր եւ բերանացի աւանդած վարդապետութիւնք այնքան մօտ են Ս. Աւետարանի օրինաց, որ մի քրիստոնեայ թագաւորի՝ մեծ պատիւ կտրէին բերել . եւ մի չքնաղ օրինակ կը ներկայացնին Ս. Պաւլոսի բանից թէ՛ « Յորժամ հետանոսք որ զօրէնսն ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք . որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց : »

գիտուն ծեր :

Իմաստուններուն մէջ աւելի իմաստունն այն է, որ բազմագէտ ըլլալով՝ զինքը սակաւագէտ ցոյց կուտայ. իսկ տգէտներուն մէջ աւելի տղէտը այն է, որ սակաւագէտ է, ու զինքը բազմագէտ ցոյց կուտայ :

Հանճարեղները՝ թէպէտ հարցուն ալ, չեն պատասխաներ, իսկ տգէտներն առանց հարցնելու ամեն բան կը խօսին :

Տգէտ մարդը իր փորը կերակուրով կը յագեցնէ, ու միտքը ճանճրացած է ընթերցումէն. իսկ իմաստունն իբրև իմաստուն՝ կերակուրը կ'անարգէ, ու անճանճիք է ընթերցումին մէջ :

Երանի՛ թէ տգէտները գիտնային, թէ ինչ է գիտելը :

Աւելի արժէք ունի իմաստունին քիչ գիտցածը՝ քան հարուստին ունեցած բոլոր ապրանքները. վասն զի հարուստը որքան իր հարստութիւն աւելցնէ, իր բարեկամները կը պակսեցնէ, ու իր վնասու համար թշնամիներ կ'աւելցնէ : Իսկ իմաստունը՝ որքան աւելի գիտուն ըլլայ, այնքան աւելի սիրելի է բարիներուն, ու անընկէց է չարերուն :

Օրհնուած է ա՛յն մարդը, որ ոչ թէ միայն մարդ ըլլալու կ'աշխատի, այլ եւ կը ջանայ առաքինութեան միջոցաւ, որ ամենքէն ալ վեր լինի : Եւ անխճուած է այն մարդը, որ չգիտեր մարդ ըլլալ, այլ մարդէն ալ զինքը կը նուաստացնէ մոլութեան միջոցաւ :

Աւելի կ'ընտրեմ իմաստուններուն մէջ իմաստուն մեռնիլ, քան թէ մնալ կենդանի ու տգէտ՝ յիմար մարդոց մէջ :

Ես ուսմունքն ու գիտութիւն այնքան մեծ կը վերագասեմ, որ եթէ գիտութիւն ծախու առնուելու ըլլար, իմ բոլոր ստացուածքս կուտայի զայն առնելու համար :

Գրեանց մէջ կը գտնեմ իմաստուններ, որոնցմէ կը սորվիմ. կամ ուժեղներ, որոց կը հետեւիմ. կամ խոհեմներ, որոցմէ կը խրատուիմ. տրտումներ կը գտնեմ, անոնց ողբակից ըլլալու համար, ուրախներ՝ որոնց հետ խնդալու համար, բարիներ՝ որոնք միշտ պիտանի են, չարեր՝

որոնցմէ զգուշանալ կը սորվիմ :

Իմաստութիւն այս յատկութիւն ունի, ուր որ բնակի, տէր կըլլայ ամենուն, ու յիմարները գերի կընէ գիտուններուն :

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ.

Ով որ գործքով կրնայ, ու խօսքով միայն կը մխիթարէ, սրտանց չէ անոր բարեկամութիւնը :

Ձախորդութիւն այս յատկութիւն ունի, որ սրտանց բարեկամները կը ճանչցնէ :

Մտերիմ բարեկամութիւն ուրիշ բանի վերայ հիմնուած չէ, բայց բարեկամներուն իրարու սրտերնին բանալ, ու իրարու հետ հաղորդակցութիւն ունենալ :

Ամենամեծ բարին՝ որ բարեկամ բարեկամին կրնայ ընել, զժուար ու կարեւոր ատեն իրեն խորհուրդ տալն է :

Ձիրար սիրողներու սրտէն ուրիշ բան չկրնար բարկութիւնը դուրս ընել, բայց միայն իրենց յանցանքը ճանչնալն ու ուղղելը :

Տրտում սիրտը՝ աւելի բարեկամին խօսքերովը կը մխիթարուի, քան թէ բոլոր աշխարհի բաներովը :

Խոհեմ պարտք է յիշել բարեկամէ ընդունած բարերարութիւնը, եւ մոռնալ անոր ըրած անիրաւութիւնը :

Մառայութիւններու վարձքը կրնայ հատուցուիլ, բայց լաւ խրատի մը հատուցում չըլլուիլ :

ԲԱՐԻ ՄԱՐԴ.

Լաւ մարդը միշտ կ'ապրի մեռնելով, իսկ գէշը՝ միշտ կը մեռնի ապրելով :

Մեծ վիշտ է լաւերուն մահը տեսնելը, բայց գէշերուն ապրիլը տեսնելն ալ անկէ պակաս վիշտ չէ :

Անանկ պահէ քու անունդ, որ գէշերու բերանը պոցես, ու լաւերը ծառային քեզ :

Ճշմարիտ ծերութիւնն՝ առաքինութիւնն է, չէ թէ մագերուն ճերմկութիւնը. վասն զի պատիւը առաքինու-

Թեանը կը տրուի, չէ թէ ձերմակ մագերուն: Մոլի ծերը պրասի կը նմանի, որուն արմատները ձերմակ են, ու ծիլը՝ կանաչ:

Փէշերուն՝ իյնալ կ'ըսենք, բայց լաւերուն համար չենք կրնար ըսել որ կ'իյնան, այլ կ'իջնա՛ն:

Առաքինի թագաւոր մը երբոր գերիներուն շղթան կը քակէ, ժողովուրդներուն ու թագաւորներուն սիրտերն իրեն հետ կը կապէ:

Թագաւորին չէնքերը չեն՝ որ զինքը սիրելի կ'ընեն ժողովուրդին, այլ իր առաքինութիւններն են:

Աղքատ ու առաքինի տղայ մը աւելի համակրելի է ամենուն առաջ՝ քան հարուստ ու մոլի ծեր մը:

Բարի գաւակը իր հօր անունը մեռնելէն ետքն ալ կը փառաւորէ:

Առատաբաշխ թագաւորները՝ բանէ մը անանկ չեն վըշտանար, ինչպէս իրենց բարերարութեանն արժանի մարդ չգտնելէն:

Ախտաւոր մարդիկ անանկ կ'ընկղմին ախտերու մէջ, որ չեն հաւատար ուրիշ կեանք մ'ալ ըլլալնուն, ուր որ չարեր պիտի պատժուին, ու բարիները՝ վարձատրուին:

ԽՈՂԵՄՈՒԹԻՒՆ

Խոհեմ մարդը չունի նոյն համարձակութիւնը պատասխան տալու, ինչ որ ագէտներն ունին հարցմունք ընելու. վասն զի տգիտութենէ հարցմունքը յառաջ կուգայ. իսկ պատասխանը պէտք է խոհական խորհրդով տրուի:

Ով որ մէկէն բան մը կը պատասխանէ, քիչ խոհեմութիւն ունենալը կը ցուցնէ:

Անոր համար զիս ամենուն կուտամ, որպէս զի ամենքն ալ զիրենք ինծի տան:

Դիւրին բան է խորհուրդ տալը, դիւրին է խրատներ գրելը. բայց դժուարը՝ զանոնք՝ ի գործ դնելն է:

Մեծ խենդութիւն կ'երեւնայ ինծի, որ գիտնալով թէ լալով ծներ ենք, ու հառաչելով պիտի մեռնինք, այսու ամենայնիւ խնդալով կ'ապրինք:

Ազատ անիկայ չէ որ ազատութեան մէջ կը ծնի, այլ անիկայ՝ որ անոր մէջ յարատեւելով կը մեռնի :

Նաւապետն անտես ժայռերէն աւելի վախ ունի, քան յայտնի արեկոծութենէն :

Ով որ ճշմարտութիւնը չուզիր լսել, անկարելի է որ առաքինասէր ըլլայ :

Լաւ է առողջութիւնը պահելու համար դեղ տալը, քան հիւանդութիւնն առողջացնելու դեղը :

Յիշէ ինչ բարիք որ ընդուներ ես, ու ջանա մոռնալ ուրիշներուն քեզի դէմ ըրած անիրաւութիւններն :

Քու քիչ ունեցածդ շատ համարէ. ուրիշի շաք ունեցածը՝ քիչ :

Լաւ մարդոց հետ եղիր միշտ, գէշերէն խորչէ :

Մեծերուն հետ ծանր վարուէ, ստորնագունից հետ՝ ընտանի :

Մօտ եղողներուն բարիք ըրէ, հեռու եղողներուն վրածք՝ բարիք խօսէ :

Ինչ մեծ կորուստ ալ ունենաս ստացուածոցդ, միշտ պզտիկ համարէ, ինչ պզտիկ կորուստ ալ որ ունենաս պատուոյդ, միշտ մեծ համարէ :

Շատ բան վտանգի մի՛ դնիր բան մը ստանալու համար. եւ ոչ ստոյգ բան մը՝ անստոյգ բաներու համար : Կ'ազայեմ գքեզ, մէկէն աւելի բարեկամ չունենաս, իսկ թըշնամի՛ եւ ոչ մէկը :

Բնութեան տուած ձիրքերն առանց առաքինութեան՝ դանակ մ'են մարդու ձեռքը, դինքն սպաննելու. վզին վերայ դրուած չուան մի են, ինքզինքը խեղդելու, խոր վիճ մնեն, մէջն ինկնալու եւ կորսուելու համար :

Շատ բան լաւ չը ճանչցուելու համար կը սիրուին. որչա՛փ բաներ կան, զորս եթէ մէկը լաւ ճանչցած ըլլար, սիրելու տեղը պիտի ատէր, ու բաղձալու տեղը անտոնցմէ պիտի փախչէր :

Մէկը կըծնի, մէկալը կըմեռնի՝ անոր տեղ տալու համար. տղու մը ծնիլը՝ իրեն պապն ու հայրը գերեզմանը հրաւիրել է :

Որչափ տարբերութիւն ունի շուքը ծառէն, ու երազը ճշմարտութենէն, այնչափ տարբեր է ուրիշի կրածը տեսնելն՝ անձամբ կրելէն :

Շէնք մը՝ որ աճապարանօք կըշինուի, հաստատուն չ'ըլլար :



